



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

**Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ  
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին**

**Հարգելի պարոն Թադևոսյան**

Ի պատասխան Ձեր 01.02.2016թ. (առցանց համար C016-D4E0-15A7) գրության, հայտնում եմ.

**1-ին հարցի վերաբերյալ**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՀՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների և կազմակերպությունների կողմից **առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս** կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) **հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է**, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Հարկերի մասին» ՀՀ օրենքի հավելված 4-ով սահմանված է ՀՀ տարածքում առաքվող կամ տեղափոխվող՝ շարժական, նյութական գույք հանդիսացող արտադրանքի, ապրանքների (այսուհետ՝ ապրանքներ) փաստաթղթավորման կարգը (այսուհետ՝ կարգ):

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ տարածքում ապրանքի առաքումը կամ տեղափոխումը պարտադիր կարգով իրականացվում է նույն կետում նշված ուղեկցող փաստաթղթերով:

ՀՀ կառավարության 05.09.2013թ. N1364-Ն որոշմամբ սահմանված է առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման կարգը: Միաժամանակ, նույն որոշմամբ հաստատված կարգի Ձև 1-ում հստակ սահմանված է, որ ապրանքը ֆիզիկական անձի կողմից ձեռք բերվելու դեպքում լրացման ենթակա է ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը: Ֆիզիկական անձի կողմից անձնագրի տվյալները չտրամադրելու դեպքում նշված փաստաթղթի լրացման այլընտրանք սահմանված չէ:

## **2-րդ հարցի վերաբերյալ**

Տես՝ 1-ին կետում բերված պարզաբանումը:

## **3-րդ հարցի վերաբերյալ**

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան՝ շրջանառության հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), ինչպես նաև ստացվող այլ եկամուտներ: Նույն օրենքի իմաստով եկամուտները ճանաչվում են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածին և «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 4.1-րդ կետին համապատասխան եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝ ծառայությունների իրացումից ստացվող հասույթը (զուտ հասույթը՝ առանց անուղղակի հարկերի), որը միջնորդական (հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության) ծառայությունների մատուցման դեպքում որոշվում է **միջնորդավճարի (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր) չափով:**

Հաշվի առնելով վերը նշվածը, օրենսդրությամբ (տվյալ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության 40-րդ, 41-րդ կամ 42-րդ գլուխներ) սահմանված կարգով միջնորդական ծառայությունների մատուցման դեպքում շրջանառության հարկ վճարողի համար շրջանառություն (իրացումից հասույթ) է համարվում այդ գործարքների համար նախատեսված հատուցումը:

**Հարգանքով՝**



**Վ. Միրումյան**